



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Handwritten text in a cursive script, possibly a name or title, written in dark ink on aged paper.

A stylized handwritten symbol or signature, possibly a monogram or a specific character, written in dark ink below the main text.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ա.



Կ. ՊՕԼԻՍ

ՏԳԱԴՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՄԱՆ

1878

ՀԱՒԱԳԱՅՈՈ Ք. ԱՊԱՏԵԱՆ Ի ՔԻ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ա.



6864 Ք. Կ.

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

1878

ՀԱՒԱԳԱՅՈՈ Ք. ԱՊԱՏԵԱՆ Ի ՔԻ

Ա.

ՅԻՇԱՐԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

1878



ՎԱՂԱՍԵՌ ԵՂԲԱՅՐԱ

ՊԵՏՐՈՍ Յ. ՓԷՇԻՄԱՆԻԱՆ

1869 Վեպտեմբերի գիշեր մը միայնակ, զրատնդանիս առաջ
ձուտած միւս օրուան կարգալիբ ճառս պատրաստելու համար՝
հը մտածէի խորին, որ դասակից ութ ընկերներ, ցերեկուան
ճաշէն և կարճ զբօսանքէ մը վերջ՝ երբ, երգելով Հայրենի
Սէրն ու վսեմ յիշատակներ՝ դառնայինք վերտին աշխատու-
թեան սրահը՝ մեկերնիս պետք էինք ըստ կարգին համառօտ
ատենախօսութիւն մ'ընել:

Ո՛վ դպրոցական սիրելի ժամեր, կա՛յ մարդ մը, որ չլինէ
զձեզ առանց համակելու տեսակ մը բողբոջ զգայմամբ, և ե-
րանի՛ չի տայ ու չորսնէ զձեզ բողբոջին:

Միւս սրբ կարգը իմն էր, բսի: Գիշերը կը յառաջէր, և
ես տակաւին բառ մը չէի գրած. նիւթ և խօսք կը վնտուէի:
հրամանէ՛ երկիւղ, և ընկերացս՝ հարարութիւն և անթի՛ աւնէի:

Անոյշ նիրհման մը չէի, չեմ գիտեր որչափ ժամանակ, և թէ
կարելի է նիրհել անձի մը որուն կուրծքը կը տրտիէ, այլ կ'ըզ-
գամ հիմայ, թէպէտ այն ժամերէն քիչ վերջը և մինչև հի-
մայ զգացի, թէ սրտիս այն բաբախումները՝ յիշած երկեղէս,
անթի՛էս ու հարարութենէս շատ աւելի մեծ պատճառ մ'ունէր:

Յանկարծ պատանեկան ճակտիս ջգբը կը ցնցին, կենաց
պատկերը առջևս կը ներկայանայ:

Չէի գիտեր տակաւին թէ ինչ խորհուրդ և ինչ զգացում
ունիմ՝ և սակայն կ'զգայի բան մը, բան մը աննկարագրելի,
Փայտեայ գրչակայտ խածնելով՝ մաշկուցամ էի ակունեքուս
տակ:

Սթափեցայ այն նիրհմանէ. ո՛ր էր թէ չէի նիրհած. զգացի
կեանքը, կեանքը, որ երազ մ'է. . . սա խօսքն գրեցի «Մ-
ր- . . . Եւ այն վարկենէն նայն երազիս,
նոյն երկեակ երազացս վրայ խորհէի: Չուզեցայ թէ կամայ, թէ
ակամայ այլ ևս խօսիլ այն երազին վրայ, թէպէտ մէկ քանի
տողեր յաւելցուցի, այլ համայատասխան չէին սրտիս զգաց-

ման . և ամեն դատարարներս ու մտածմունքներս տեսուր մե-
լամ֊դձու թեան մէջ ծածկեցի լսին :

Կայրէի այն տողերը , կ'այրէի կ'ըսեմ , այնպէս՝ որոց վա-
շին անգամ չի մնար : վասն զի երկու պատճառ ունեի այրե-
լու : Նախ որ , քիչ ժամանակէ վերջը , Վերթերի հասաչները
լսեցի . առանց յագենալու կը կարգայի . և երբ սա տողերն
ևս « Մարդուս կեանքը երազ մ'է , ինչպէս շատ մարդիկ հա-
ւատացին . . . » ցուրտ սարսուռ պող քրտիկը մը պատեց զիս :
Նոյն դատարարը այնպիսի մեծ հանձար մը՝ իւր կատարելու-
թեան մէջ ունեցած է , մինչդեռ ես : իմ տղայ հասակիս մէջ
. . . և սիրտս կը բորբոքեր :

Երկրորդը նոյնչափ մեծ կրնամ ըսել . վասնզի — կը յիշեմ
որ գրածիս հաւնեցան , թեպէտ գիտեմ թէ աւելի քաջալի-
րութիւն մ'էր , սրովհետեւ ինչ աւելի կրնայ յուսացուիլ
ինձմէ . իսկ երբ սիրտս կարենային կարգուլ , կարենային քնն-
նել՝ այն ասեկ պիտի հասնեային — միթէ ծաղրեցին զիս , միթէ
պիտի ծաղրեն զիս կ'ըսէի իւրովի . այն խօսքը սերիչէ մ'ա-
ռած՝ և իրեն սեպհականած է , ըսելով : Իրաւի և ոչ մէկը
բան մ'ըսաւ , վասն զի գիտեմ որ և ոչ մէկը կարեւորութիւն
կուտար , ո՛րք մնաց որ պիտի յիշէին . ոյլ չէի մտիթարուիր .
չէի մտիթարուիր վերտաին . որ Վերթեր անգամ կրնէ թէ
« . . . Ինչպէս շատ մարդիկ հաւատացին » :

Կուզենայի , և կ'ուզենամ այրել , ըսի . այլ միթէ պիտի
կարենայ ջնջուիլ սրտիս խորէն այն մեծ տպաւորութիւնը , որ
անընթելի գրոշմուեցաւ անոր մէջ . և ա՛հ , ինչ դառն պա-
տահարներ եւս իրարու վրայ յարթեցին , և այս դատարար-
ը ուսուցաւ մտքիս մէջ . ո՛հ , եթէ կարելի ըլլար գահու-
թեամբ կ'այրէի : Եւ թէ , ութ տարիներ առաջուան , իմ
քաղցր և դառն , տխուր և սոսկալի մէկ յիշատակն է , որ
մինչեւ իսկ , մի և նոյն թուղթը՝ որուն վրայ գրեցի՝ կորու-
սերց ջուս մը կը պատճառէ ինձ :

Եւ վերտաին կը կրկնեմ՝ այն խօսքը , առանց հոգս ըլլելու
սպայաբար . բա՛բե . փա՛ռք մ'է ինձի . ո՛րք էր թէ չէի
զրացած անոր ծանրութիւնը :

« Մարդուս կեանքը երազ մ'է . . . »

Ծննդեմէս երեք տարի վերջ , մի և նոյն օրօրօ-
ցին մէջ՝ ուր ես էի երրեմն՝ ուրիշ մանկիկ մը կը
ձէչէր , կու լար :

Շատ անգամ այն օրօրօցին շուանը ձեռքս՝ որրէի :
Երազ մ'էր ինձ տեսնել զայն , իմ եղբայրս . և
չէ՞ երազ մը , որ կ'զգամ թէ՛ թոսաւ նա , և հիմայ
ցուրտ հոգէ օրօրօցին մէջ . . .

Ա՛հ , և այժմ , անցելոյն , տաս և ութ տարիներ
ու մտքիս մէջ բազմաթեւ յիշատակներովդ որո-
րեմ այդ անշարժ շիրիմը :

Օ՛հ . շա՛տ իսկ նիրհեցիր . քանի՛ խորին է քու-
նրդ . զարթի՛ր այլ եւս . չ'ե՛ս լսեր ինձ , որ ձգած
վայրկեան մը այն ելեկտրական՝ և զիս միայն ցնցող
թեւերը՝ և դադարած արտասուածոր հառաչանք-
ներէս քեզ երգեր որսրուն՝ ձայնեմ՝ քեզի , զա՛ր-
թի՛ր . այդ չա՛փ անոյշ է քուն յաւիտենական :

Տակաւին տաս և ութ ժամեր արթուն էիր , որ
կենաց օրուան հագիւ մէկ քառորդն է , և արչա-
լոյս՝ յորում նոր առջի քունէզ արթնցար , և մին-
չեւ գիշեր , որ շատ հեռի էր , կը բաղձայիր պտը-
տիլ , զրօսնուլ . և ինչ ըրիր , որ այդ չափ հոգնած ,
նուաղած , ինկեր ես , սիրելիդ իմ :

Ա՛հ , արչալոյս . այլ ինչ օգուտ է քեզ նա ,
երբ դու ալ տենչ ու յոյսեր ունէիր , սիրուն գրօ-
սանքներ և անոյշ երազներ , իղձ ու փախաք մինչեւ
արեւու մուտք , պտտիլ վայրեր , քաղել ծաղ-
կունք . . . այլ , ահա հաղիւ ժպտելով յուսայի՛ր
գեղեցիկ օր մ'անցունել , ա՛հ , աւասիկ նորածին և
լուսափայլ ճառագայթներն արեգական՝ մութ ամ-
պերէ կը սեւնան , աշխարհի խաւար մը տիրեց . և
առատ , ու իր մշտահոսութեան մէջ ձանձրանալի
անձրեւ մը կը տեղայ , և որչա՛փ տաղուկայի է ա-

նոր, որ նպատակ մը, փափաք մ'ունի, խօսք տուած է շրջագայել ընկերներու բազմութեամբ ու զուարճանալ :

Քիտցար որ մինչեւ երեկոյ պիտի տեսէ . թէ պէտ առաջ, օ՛հ, յուսացող հոգիդ, յոյս—պատուհանէ 'ի պատուհան դիտէիր երկինքը թէ պիտի պարզին ամպերն թխադոյն և պիտի բացուի՞ կենացդ օդ . . . : Այլ, յուսահատեցար, և ամենքս ալ փափաքէինք, որ մինչեւ երեկոյ քու անմեղ պտոյտը ընես, սիրեցեալդ ամենեցուն . քեզ յոյս տալինք, թէ ահա սպծառանայ երկինք, Պետրոս . ահա կը կտրի ալ անձրեւը, ահա արեւու ճառագայթները . . . սակայն, ինչպէս կ'ըսեն, անոնք առեկի անձրեւ ժողովուր համար խաբուսիկ ճառագայթներ էին :

Քանի քանի հեղ, և դու, թէպէտ միշտ երկբայ՝ հաւատացիր մեր խօսքին, վասն զի սիրելեաց սիրելի խօսքերու հաւատացուի . և աղօթէինք մենք, օ՛հ, թէպէտ չ'էինք յուսար, թէպէտ միշտ երկուացեալ և մեք, այլ ակնկալէինք քու սիրուդ համար :

Երթալով կը սրտէ խաւարն, և արցունքէ անձրեւներու գետեր կը թափին . տխուր կերպով նայեցար չորս դիզ, խեղճ տղայ . սիրտդ հատաւ ալ և յուսակտուր վերստին դարձար ննջել, « երբ օղբ բացուի, իմացուցէք ինձ » ըսելով . ա՛հ, միշտ ու միշտ կը տիրէ մառախուղն այն թախծալից, ա՛հ, քնացի՛ր ուրեմն, քնացի՛ր . . . :

Թէպէտ մտօրդ չափեցիր ամենայն ապէտք և վիշտք, թէպէտ ճանչցար ամենայն տառապանք, այլ, վշտահարդ դու, ամենու վրայ տխուր ակ-

նարկ մը ձգելով՝ որ միանգամայն սրտայառ դարձնէիր բաղձադին դէպ ի քաղցր երջանկութեանց, ուրախութեանց, և հոգնած ալ՝ որ սիրտդ կոտրած ըլլալով չ'ուզեցար օրդ 'ի բուն մթութեան մէջ անցնել տղայական անհամբերութեամբ՝ լալով դոցեցիր աչերդ :

Ա՛հ, երբ ցաւերով տոչորուն, միշտ անհանգիստ ու հիւանդ, կ'ըսէիր « աղօթեցէք որ քնանամ » և երբ քնանայիր՝ հանգիստ և ուրախ՝ զուարթ անրձոց մէջ թափառէիր :

Կենացդ մէջ խակ, կենաց քունն խակ քաղցր էր քեզի . թէպէտ, աւա՛ղ, դիտէիր, թէպէտ, դիտէինք թէ երբ արթննաս՝ վերստին նոյն ցաւերը պիտի տանջեն զքեզ, և այժմ, ա՛հ, ինչո՞ւ կ'ուզենամ այդ անդորր ու խաղաղ քունէն զարթուցանել զքեզ :

Կենաց քնոյն մէջ խաբուսիկ են երազներ, որչափ ալ լինին սիրելի անոնք, վասն զի այնուհետէ վերստին զարթում մը կայ մի և նոյն կենաց . և ո՞րչափ տիրի մարդ, երբ արթննայ այն քաղցր տեսիլներէ և դանձ ինքզինքն մի և նոյն տառապանաց աշխարհին մէջ . բայց այդ քնոյն մէջ զարթում չը կայ, և անոր համար գիտեմ որ երջանիկ պիտի ըլլաս, վասն զի յաւիտենական երկնային ու ձըւմարիտ երազներ յարակայ ունիս :

Քեզի համար երկրորդ կեանքը սկսաւ . և չի՞ պիտի ապշիս, երբ գտնես ինքզինքդ՝ թէ ես, ինչ որ էիր, յետ քիչ մը երազելէ . . . այո՛, երա՛զ է կեանք . երա՛զ, Լսկն գերագոյն փշեաց 'ի հող . այդ ամանին մարմնոյդ մէջ դրաւ նա կեանքը . . . վերստին շնչէ այժմ, կը թուրւ հոգիդ այդ

պատեանը՝ ու վերանայ . . .

Սթափեցար դու կենաց անըջէն, վստն զի, ո՛ր գիտէ, գուցէ զգայիր այդ նոր կենաց բերկրութիւնը՝ որ աշխարհ տակաւին կը ննջէր՝ դու կը զարթնուս . այլ մենք մեր երազին մէջ կը փնտրուենք զբեղ « ու՞ր գնաց նա » ըսելով . իսկ չ'ենք գիտեր թէ մեր այժմեան արցունքը՝ երազներու մէջ լալու կը նմանի . չ'ենք գիտեր թէ, մեր արթննալէն վերջը զարմացմամբ ու խնդալով պիտի հարցնենք « շատո՞նց արթուն ես . մենք կարծէինք թէ մութ է տակաւին . մինչդեռ մթութիւնն ցուցնողը՝ մեր արտեւանունքն էին ուրեմն . զի եթէ մենք ալ զարթնուինք՝ արդէն միշտ լոյս էր . . . »



Կը սիրէր նա ծաղիկները և կը խնամէր դողդոջ մատներով . կ'աշխատէր, կը բրէր ու կը տնկէր, կը ջրէր և փափուկ հողով ծածկէր նոցա արմատները . կը զատէր քարերն և կարծես ինքնիրեն կը մրմուար « անգո՛ւթներ » :

Կը սիրէր յոյժ, և իւր տկար մարմինը կը հոգնեցնէր անոնց սիրուն համար : Խեղճ տղայ, որ հագիւ մէկ երկու ժամ աշխատէիր, անտանելի ցաւեր անկարող ընկին քեզ . և բրչիդ վրայ յենած, տանէիր ծառի մը քով ձգել զայն . և սենեակի գալով, զարձեակ պատուհանիդ առջեւ աչքերդ յառած կը դիտէիր զանոնք . կը նայէիր . կ'զգայիր դեռ խնամելու պէտքը՝ այլ, աւա՛ղ որ չ'էիր զօրեր . . .

Յետոյ վերստին իջնէիր, վերստին երթայիր անոնց քով, և մէջքդ կորած, շատ բաներ կ'ուզեսայիր ընել . այլ կարողութիւն չ'ունէիր :

Քու մեղամաղձ բնութիւնդ, գիտեմ, կը ճանչնայի ամեն բան, գիտէի թէ շատ կը սիրէիր զիս : Ո՛հ, կրնա՞մ, կրնա՞մ մուսնալ այն ժամերը՝ ուր շատ գիշերներ կը խօսէինք միատեղ : Շատ անգամ արգահատ կը ժպտէիր, երբ կը խօսէի երբեմն, և երբ լուռ ու տխուր կը գտնէիր զիս « վերստին լուռեց խենդը . . . » կ'ըսէիր :

Սպագայի մէջ ընելու համար, շատ բաներու վրայ կը խօսէինք, մեծամեծ բաներ կ'երեւակայէիր ու կ'ակնկալէիր . . . Սմեն որ քեզի համար, մեծ մարդ մը պիտի ըլլայ, կ'ըսէին, բայց դու գընացեր . . . և գիտեմ թէ առանց ուզենալու կը խարէիր :

Օր աւուր կը տկարանար նա և սաստիկ հագէ մը կը տանջուէր . կը կարգայի աչքերուն մէջ թէ զարման մը կը փնտռէր, բժիշկներէ երբեմն յոյս կ'ունենար . երբ կը տեսնէր թէ օգուտ մը չի կայ՝ կը մերժէր, կը մերժէր . . . և այն մեղմ գաւնուկըն խոնարհ՝ բարկութիւն և ձանձրոյթ կ'զգար :

Երբեմն կ'ըսէի իրեն « այս ինչ բանը մի՛ ըներ, կամ ըրէ » երեսու նայելով « դու ա՛լ սխար » կըսէր, և շատ անգամ դառն արցունք կը թափէր : Մարմնոյն ցաւէն աւելի, աշխարհի վրայ ունեցած սէրէն, մարդկանց զինքը առողջացնելու անկարողութենէն յուսահատելով, կրկնութիւններէ ձանձրանալով, ունեցած վիճակէն նեղանալով՝ կը հառաչէր տխուր :

Շատ անգամ միայնակ արտասուէի այս վեհանձըն ու վշտաշարչար հոգիին համար . զգայուն էր նա և հանճար ունէր, սակայն սրբ մը անգութ կը մաշեցնէր զինքը :

Ո՛վ հեղ և առաքինի պատանիդ , ներեա ինձ .
 ո՛հ . գիտեմ թէ որչափ վեամ է սիրող , որչափ
 վեհանձն ես դու , և բնաւ չ'ես ուզենար , որ քե-
 զի քու արժանիքիդ շափ գովեմ . ներեա՛ , եթէ
 քանի մը տկար խօսքեր կը թոթովեմ , վասն զի գի-
 տեմ որ ներելի չ'է եղբօր մը գովել զեղբայրն ,
 այլ , խոնարհելով բարձրացար դու , ալ եղբայրս
 չ'ես դու . և կը սլաչտեմ այն կրօնքը՝ որ քեզի հո-
 գեղէն թեւեր տուաւ , որ բարձրացոյց զքեզ յա-
 իտենականին տաճար , ՚ի յաւերժական փառս .
 ա՛լ եղբայրս չ'ես դու . . .

Հող պիտի գտնես և երկու վաղամեռ եղբայր-
 ներ քեզի պէս , որոց տեսութիւնը պիտի մեզմէ
 անջատմանդ ցաւը : Շանչնա՛ս պիտի զանոնք երբ
 տեսնես , որ յանկարծ կը փաթթուին քեզ . անոնք
 զոր տեսած չ'էիր դու , և ես չեմ կրնար յիշել .
 տա՛ր և ինձմէ իմ սիրալիր ողջոյներս :



Վերին Պոսփորի տեսարանները շատ իսկ կը սի-
 բէր : Շատ անգամ կարճ կերպով մը կը նկարագ-
 րէր . կը սիրէր հոն և կը փափաքէր հոն երթալ :

Վերջին , ա՛հ , վերջին անգամ գնաց :
 Որչափ ուրախ էր : Ուրիշ տեղ մը չ'էր ուզե-
 նար , այն գեղեցիկ վայրերը մի միայն կը սիրէր
 թափառալ :

Դեռ չի գացած , խեղճ տղա՛յ , մէկիկ մէկիկ կը
 համբէր ինչ որ պիտի ընէ : կը յուսար թէ , առաջին
 օրը , որ հոն հասնի , երկրորդ օրը բոլորովին ա-
 ուողջացած , ուզածին պէս պիտի պտտի : Կ'ըսէր
 ինչ որ պիտի ընէ առաւօտները , պիտի երթայ Զու-
 բերը , անտառներու մէջ սոխակները մտիկ ընելու .

Յովեղըր պտտիլ , երեկոյները շրջագայել , լուսնոյ
 գիշերներ մակոյկով անդորր ծովու վրայ շրջիլ .
 ո՛հ , դեռ ուրիշ բան չ'էր խնդրէր « և աշնան երբ
 վերադառնամ , տեսէք որչափ առողջ պիտի ըլլամ ,
 և եթէ ա՛լ հիւանդ եմ ըսեմ , զձեզ ձանձրացու-
 նեմ , զիս ներս մ'առնէք » կ'ըսէր և կ'ուրախանար
 յոյժ :

— Մ'հ , կը կապուի մարդուս լեզուն և աւելի ու-
 րիչ թաղճութիւն մը կ'զգայ : Չ'կայ միտք մը , որ
 կարենայ քննել զքեզ ո՛վ դաղտնիք , և վճռել ու-
 խնդրել , այս կամ այն : Քանի այն իւր խօսքը կը
 յիշեմ , թէ « երբ դարձեալ հիւանդ՝ զիս մ'ընդու-
 նիք » ա՛հ , կ'ըսեմ իւրովի , թող հիւանդ ըլլայիր
 դարձեալ , և մնայիր մեզ հետ , վասն զի անդարձ
 է այդ բաժանումը . . . և դարձեալ ինքնովին կ'ը-
 սեմ « հիւանդ , ապրէ՛ և չարչարուէ՛ » ըսել » , . . .

Մ'հ , այս տխուր կորստեան ցաւը , ի՛նչ , մի-
 թէ կրնա՞յ ամոքել զմարդ « փոխանակ հիւանդ ապ-
 րելու՛ մեռար » ըսելով . բնա՛ւ . այլ , Աստուած
 իմ , չի պիտի մոռանամ այն սեւ գիշերը , երբ իւր
 քովէն բաժնուեցայ , տեսայ զինքը այն աստիճան
 նեղութեան ու չարչարանաց մէջ որ կը տանջուէր .
 Աստուած իմ , յիմար մը կը դառնամ , երբ կը յի-
 շեմ թէ , չ'եմ գիտեր ինչ տեսակ աղբուութենէ ,
 յանկարծ ծնզի վրայ ինկած , արտասուալից կ'ա-
 զաղակեմ , առ աներեւոյթ Արարիչն , և կերկեռ-
 եալ ձայնով մը , կը խնդրեմ . . . սոսկալի բան մը ,
 սոսկա՛լի , որ տակաւին կը ցնցուիմ . որչափ ահա-
 ւոր է այն ժամը , երբ անյոյս ալ սիրելւոյ մը կեան-
 քէն , ալ գիտնալ թէ անհնարին է , և աղօթել ,
 որպէս զի , առանց աւելի երկար տանջանաց , ուր
 մինչեւ յետին ժամերուն չի կորոյս իւր բանականու-

թիւնը, մտքին կարողութիւնը, որ կրկնապատիկ կը խոցէին աւելի զինքը, աղօթե՛լ, կ'ըսեմ, որ յաւիտենական խաղաղ քունը գոցէ ուրեմն անոր արտասուազին աչերն անքուն: —

Առաւօտուն կը պատրաստուէր. տեսայ որ պըղտիկ անգիր տետրակ մը և Աերթերի տաղերը միայն հետ կը տանի — ուզած էր ինձմէ և ես չէի տուած, չ'ուզեցայ տալ, մէկ խօսքով, ուրիշ մ'էր գնած — թող չի պիտի տայի, այլ չի կրցայ մի' տանիր ըսել, չի կրցայ. կապուեցաւ լեզուս և հառաչով մը դուրս ելայ: Հոն իրեն պէս մեղամաղձ և յուսահատ, թէպէտ դիրքով տարբեր, այլ սըրտով ու զգացմամբ համապիշտ բարեկամ մը կ'ուզենար ունենալ առանձնութեան ընկեր:

Ասոնց ամենքը տեսայ. ամենքը դիտեցի, և ապագան, ափսոս որ գիտէի:

Շատ ուրախ էր դժբաղըը, անյագ կը պտըտցնէր ակնարկները ամեն բանի, կը դիտէր արըչիու և կարծես ամենու հետ կը խօսէր:

Երեկոյ մը միատեղ պտտեցանք ծովեզրը, ինք կամաց կամաց կը քայլէր, վասն զի չ'էր կրնար. անգամ մը « դու առաջ անցիր, վասն զի ինձի պէս կամաց չես քայլեր » ըսաւ. « ո՛չ, ասկից շուտ կը քայլուի՛ այս տեղերը, ըսի. « հը՛հ... » քմծիծաղ մը միայն, և երկինք նայեցաւ:

Կը դիտէի որ կը խպնէր իսկ, ա՛հ, կը խպնէր, ամօթ, ցաւ կ'զգար թէ ինչո՞ւ այնպէս ըլլայ. ինքը տակաւին պատանի, ինչո՞ւ հիւանդ ըլլայ, ինչո՞ւ չի կարենայ քայլել, վազել, տեսնողը ի՞նչ պիտի ըսէ. . . Ասոնց ամենքը մեծ մեծ վշտեր էին: Է՛հ. դիւրին է, Աստուած իմ, դիւրին է զգալ

այս ամենքը և չ'արտասուել, չ'անիծել բաղըը: Ասոնց ամենքը կ'զգայի, և ի՛նչ կ'ըլլար սիրտս:

Պատուհանին առջև առանձնեկի նստած կը դիտէր. լուսինը իրեն տոճոյն ճառագայթները աւելի տոճոյն դէմքի մը սեւեռած՝ անոր տխուր ճակտին նայելով կը մխիթարուէր նա. իսկ սա՛. . .

Երկուքն ալ գըլուի գըլսի տուած՝ կը հայէին զիրեար:

Կը դիտէր երկինքը. կարծես աստղերը կը համբէր. ա՛հ, ինչե՛ր կ'զգար, ինչե՛ր. ես ալ ղինքը կը դիտէի հեռուն նստած: Պիտի լար, պիտի հառաչէր, սակայն ինձմէ թաքուցանել կ'ուզենար. իսկ ես ամեն բան կը կարդայի, սիրտս կտոր կտոր կ'ըլլար:

Խօսէր պիտի. իսկ, կը նայէր որ ես անգամ մը խօսելու սկսիմ, որ փղձկելու մտ էր. չրթուըներս կըպուած էին:

Գիշեր բարի մաղթեցի. ըսի որ ինքն ալ պառկի: Պառկե՛լ. որչա՛փ հեշտ էր անոր համար:

Հազիւ տաս օրեր առաջուան վիճակը ունեցաւ թշուառը. աւելի աղէկ ըլլալ կը յուսա՛ր. ա՛հ, ո՛չ. չ'էր յուսար թէ այն կլիմայն, այն երկինքը զինքը պիտի առողջացնեն, այլ վերջին ողջոյն մը կը փափաքէր տալ, հոն՝ աշխարհի:

Իւր տխուր ու անյարիր քունէն երեք ամիս առաջ, սոսկալով իմացայ և վստահ եղայ թէ ինքն ալ գիտէր, որ իւր ընկերացը գրած է « այս նամակիս պատասխան՝ դամբանականս գրեցէք. . . »

Տաս օրեր հազիւ առաջուան վիճակը ունեցաւ ըսի. այլ դարձեալ անգամ մը, օր մը վայելե՛ց այն բերկրութիւնը, որոյ կը փափաքէր. . . քանի՞

անգամ ջրերը գնաց , սոխակները լսեց , քանի՞
լուսնոյ գիշերներ շրջեցաւ ծովուն կրայ : Միայն եր-
կու անգամ հազիւ կրցաւ անտառներն երթալ , և
քանի մը կաթիլ այն պաղուկ ու արծաթափայլ ջը-
րով իւր այրած շրթուկքը թրջել :

Նոյն յիշած գիշերս մինչեւ լոյս չ'էր քնացած ,
և իւր տկարութեան մէջ առաջին սոսկալի նշանը
տուաւ :

Երբ առաւօտուն քովը դացի , ութ ժամեր ա-
ռաջ տեսած եղբայրս , ութ ժամեր առաջ տեսած
այն տխուր և հիւժեակ արարածն ալ չ'էր . այն ու-
զորմելի տղան , այն խեղճ պատանին , ա՛հ , սիրե-
լի Պետրոսը չ'էր , Աստուած իմ , չի կրցայ ճանչ-
նալ զինքը , աւելի հիւժեակ , ուշաթափ ու կթուց-
եալ , անկողնոյն տխուր սնարէն չ'էր զօրէր բառ-
նալ գրուխն այն բազմախորհուրդ , վաստակեալ ու
բուրրովին գունատ :

« Այս գիշեր շատ դէշ էի , մինչեւ լոյս աւելի
տանջուեցայ » ըսաւ . շրթուկքներս խածնելով , ող-
ջուեցի :

Վերստին անցան ութ օրեր , մի և նոյն հիւան-
դըն էր , ինչպէս շարաթ մ'առաջ . այլ վերստին ,
կ'ուզենար դուրս ելլել , ա՛հ , չըջագայել :

Յաղթած իր անկարող վիճակին , խնդրած էր
անգամ մը պոտոյտ մ'ընել նեղուցին վրայ (սռա-
ջին և վերջինն էր) , խիստ հանգարտ ու խաղաղ է-
ին աղիքները , զմայելի օդ մը : Ինչե՛ր կը յիշեմ
այս ժամերուս . ի՛նչ անոյշ և սոսկալի յիշատակ-
ներ ու մտածմունք , զորոնք սոսկալով կը վանեմ
հետի :

Մինչեւ Սեաւ ծովուն բերանը գացած , և հոն

ձգած էր այն թաղծալից հողուոյն յետին ու լռիկ
յիշատակներ . . . և ոչ խսկ պղտիկ անհանգստու-
թիւն մը զգացած էր , որպէս շնորհած էին իւր
վշտերն ու ցաւերը վայրկեան մը չի խռովել զին-
քը , և կամ , այն այրած սրտին մէջէն՝ նետուած
էին ծովուն մէջ քիչ մը զովանալու համար . և ժըպ-
տած էին իրեն պատրոզ , մթագոյն ու կատաղու-
թենէ խելըցած կոհակները :

Ա՛հ , քանի մտօքս աներեւոյթ կը սլանամ , և կը
տեսնեմ զինքը մակոյկի մը մէջ , անծիծաղ—ժըպ-
տուն , կապոյտ աւելի քան երկնից ու ծովու . սե-
ւեռեալ աչերն դէպ ՚ի եղբրը յաւիտենականու-
թեան . . . ի՛նչ պատկերներ կ'երեւակայեմ :

1864 թ. 1989

Իւր վերագարճը աւելի տխուր , աւելի դառն և
աւելի սոսկալի եղաւ : Անկողնէն շէր զօրէր ելլել :

Գիշեր մը , ահարկու գիշեր մը , որ բնաւ չի պի-
տի կարենամ մոռանալ , քովը կանչեց զիս . աւան-
ձին էինք . « կը տեսնե՞ս վիճակս , սիրելիդ իմ եղ-
բայր , ա՛հ տաս և ութ տարեկան . բա՛հ . և ոչ օր
մը խնդացի այս տաս և ութ տարիներու մէջ : Ար-
ցունքով ծնայ , լալով մեծցայ և լալով . . . միշտ
բալով . օր մը հանգիստ չ'ունեցայ , միշտ ու միշտ
չարչարուեցայ . կը խնդրեմ սիրելիս , փոխանակ ու-
րիշներու և մտացղ ծնունդը եղերերգէլու , ահա
քեզի նիւթ , ահա զիս քեզի , սղբերգէ վիս , իմ
վիճակիս վրայ դրէ : Ա՛հ . տաս և ութ տարուան
մէջ , օ՞ր մը , օ՞ր մը ժպտեցայ , ամեն բան վիաս է
ինձ , սաք , պաղ , նստիլ , շրջիլ , աշխատիլ , ա՛խ ,
ի՛նչ կեանք է սոյս . . . » :

Այս խօսքերը ըսել վերջ , սկսաւ դառնապէս
լալ : Եւ ինձի այս պարտքը տիրապոսք վրաս դը-
նելէ վերջ՝ և ես ձեռացս մէջ աչերս դոցսած՝ ար-



տասուացն կաթիլները թոյլ չէի տար որ թափթը-
տիին . այլ չի տեսա՞ւ մատերուս ճեղքուածներէն
չիթող այն քանի մը կաթիլները . . . :

Ս'հ . այս պարտքը , դժբաղը սիրեցեալդ իմ ,
դու վրաս դրիր , բայց , ո՞ւր էր թէ կարենայի
քու դառն կեանքը գրելու , քու սիրտը երգելու
համար՝ կարողութիւն ունենալ : Երգե՛լ զքեզ . . .
այլ զգայուն սիրտս կրնա՞յ , մտածող ճակատս
կրնա՞յ բաւականանալ քանի մը անգոր խօսքե-
րով . . . է՛ր քու անմխիթար բաժանումը , քիչ
մը , շատ քիչ ամոքելու համար , գոնէ սա մխիթա-
րութիւնն ունենալ :

Քու նիհար մատներով խնամած ծաղիկունքդ ,
որոնք կը ժպտէին քեզ քու արցունքը սրբելու
համար , և դու , որ շուրջդ պատած բոլոր ընտան-
եացդ , որ վիճակիդ վրայ միշտ սրտմաշուքով խոր-
հէին՝ դու , աւելի մխիթարանք անոնցմէ գտնէիր .
և որոնք այժմ , տխուր , գլխիկոր , կ'ողբան զքեզ
մեզի հետ միասին . և որ քեզի ժպտէին՝ արտաս-
ուալից հառաչանօք կ'երերան թերթերնուն վրայ
դողդոջուն կաթիլներով . . . և շունին եւս այն
մխիթար , ծածուկ ու խաբուսիկ ծիծաղը՝ որոնք
թէպէտ շատոնց կուլային , թէպէտ դու շէիր տես-
ներ , որ արեւու տաք ճառագայթներու ժամանակ
իջնէիր պարտէզ՝ և անոնք , կը կեղծէին քեզ , սըր-
բելով արցունքնին , և կը խնդային երեսիդ՝ որ
հաճոյք մ'ազդեն քեզ . . . : Ս'հ . կորուսին իրենց
բոյրը , կորուսին իրենց գեղը . այժմ , և նետած վը-
րանուն երկններանդ գարդերը՝ կուգան սգազգեաց
քու տխուր գերեզմանիդ վրայ՝ անզարդ , անբոյր ու
տղեղցած՝ յետին վտահար բարեկամներդ , որ քու
անհարկու մենութիւնը չեն ուզենար առանձին թա-

ղուլ . . . և ես աւելի պիտի սիրեմ զիքնք , Յոր-
չափ սիրէի քո սրտակից ու գթալիր ընկերներդ և
ճշմարիտ բարեկամներդ . . . լուռ են նոքա՝ և քու
լուռթեանդ կրնան խօսիլ : Անոնցմով և ես իմ լը-
ռիկ հառաչանքներս , իմ ողջոյներս ու անխօս խոր-
հուրդներս կը խրկեմ : Եւ դու աւելի պիտի սիրես
յոյժ , երբ պիտի տեսնես անբաժան քեզի , կը ծած-
կեն միշտ քու պաղ հողդ :

Ս'հ , սիրելի՛ է ինձ այն հողը՝ որ քու աճիւնդ
կ'ամրոտիէ . սիրելի՛ է ինձ այն հողը՝ որ էր երբե-
մըն պահարան վսեմ հոգւոյդ . պաշտելի՛ է ինձ այս
հողը՝ որ Աստուած մը՝ իւր շունչը կը դնէ անոր
մէջ . . . :

Ս'հ , քու սուրբ ու քաղցր , տխուր ու դառն յի-
շատակներդ , քանի քանի զքեզ սիրող , զքեզ ցաւող
սրտերու ու մտաց մէջ գերեզմաններ ունեցաւ . . .
թաղուեցա՛ր անմտաց մտքերու մէջ , թաղուեցա՛ր
և ունեցար մշտատեւ շիրիմներ աշխարհի մէջ , որ
ամեն ինչ յիշեցնեն զքեզ , զքե՛զ քաղցր , բարի ,
վշտահար արարած : Ս'հ . ո՛րչափ խեղդուին մեր
ձայներ հառաչող կոկորդներու մէջ , դարձեալ քու
անունդ կը հնչեն , քու քաղցր անունդ :



Վերստին դարձաւ իւր հայրենի տունը . և ի՛նչ
ջանք ըրաւ ողորմելին , ի՛նչչափ ոյժ թափեց ալ ,
որպէս զի դառնայ հոն՝ ուր ծնաւ , և հոն . . . :

Երկու երեք օրեր ոտքի վրայ հաղիւ կրնար կե-
նալ . և պատուհանին առջեւ նստած՝ ծաղիկները
կը ցուցնէր դարձեալ « այս ինչ ծաղիկը քիչ մը ծը-
ռած է , սա թաղարին ծաղիկը գնա շտկէ , կ'ա-
ղաչեմ , վարդենույն նեցուկ ճիւղը ինկած է . . . »

Բեզի միշտ , քու ուսերդ մտած , դքեղ չըրջապատող ամբողջ ընտանեացդ , որ գորովալիւր նեցուկ կ'ըլլային քեզ , վարդեհիդ վաղաթառամ , որ դեռ կոկոն թառամեցար , և դքեզ խոցող հազար փշերն , առանց զգալու որ իրենց ալ կը խոցեն՝ կը փարէին քեզ , և առ առ թափէին արցունք , որպէս զի կանգնիս . . . ա՛հ ամենուս գրկէն՝ ուր ուժով յենած էիր՝ ծռեցար . . . ինկար . . . և ոչ մէկ ձեռք մը կարող է քեզ կանգնել այլ եւս . և իյնալովդ , քու փշերն , որ շատ կուրծքերու քսուելով արիւնեցիր : Ի՛նչ օգուտ է ալ ոռոգել արտասուաց ջրով . հողը կը ծծէ անյագ , ի՛նչ օգուտ է ծագիկին թարշամեալ :

Ա՛հ , կը խնդրէր , կը խնդրէր ողբալից իւր կեանքը . կ'աղօթէր առ Աստուած . կը հայցէր անոր ողորմութիւնը « գթա ծաղիկ հասակիս , Աստուած իմ , գթա ընտանեացս , որոց ամենուն սիրտն արտի խոցի . գթա՛ հասակիս , ողորմէ՛ ինձի Աստուած իմ և ընտանեացս » : Ա՛հ . իւր աղերսալի ու արտասուօք հառաչած հեծութիւնները՝ անհնարի՛ն է բացատրել ազդած սարսուռն և գութ :

Կը նայէր ծնողացը վրայ և կամաց մը կ'ըսէր ինծի « որչափ կը տանջուին ինձի հետ , ինձի համար » : Սոսկալի գիշերներ կը հսկէին իւր վրայ , սեւ ու մութ գիշերներ : Անոր կենաց պատճառ եղող հայր ու մայր՝ իւր առողջութիւնը չի կարացին տալ . ոչ աղօթք , ոչ արցունք չի խնայեցին իւր կեանքը :

Աչերն նուաղուն դարձնէր յարածամ իւր շուրջը , և օգնութիւն մը կը փնտռէր : Առանձին էր սենեակը . ներս մտայ . ահեղ աղմուկ մը բոլոր պա-

տերն կը սօրսուեցնէր . աղմուկ մը շնչառութեան , կուրծքի մը սոսկալի ելեւէջը : Աթուին վրայ ինկայ ինքզինքս բռնելու կարողութիւնս սպառած . և սարսափած , չէի գիտեր թէ ո՛ւր եմ , ի՛նչ ընեմ . ի՛նչ լսեմ : « Ղաղը ի՛նչ կ'ուղենաս , որ քեզի բերեմ » ըսի . — որպէս թէ խօսք մը ընեմ՝ այնպիսի , որ մեղմացնեմ անյուսութիւնը — « կեանքս . . . » լսաւ կամաց մը . կարծես թէ չի հասկցայ , կուլայի ակռաներս սեղմելով հեծկտանքս չի լսելու համար « բան մը միայն . . . բան մը միակ . կեանքս . . . » և քանի քանի անգամ այս բառը կըրկնեց բոլոր սրտին անդուռդէն « կեանքս միայն սիրելիդ իմ , ա՛խ սիրելիդ իմ , քաղցրիկ եղբայրս . . . կեանքս միայն . . . կեանքս . . . » ուրիշ մը ներս մտաւ , և սարսուով դուրս ելայ գողդո՛՞ղ . . . :

Ա՛հ , եթէ բժիշկ անունը ունենայի , այս անունով պարծենայի , և մի միայն , ամենէ տգէտին պէս , մի միայն բոլոր կարողութիւնս էր , գիտնալ թէ չի կրնար պարիւ , չեմ կրնար դարման մ'ընել , պէ՛տք էի նախ ինքզինքս սպաննել . ինչի՞ կը ծառայէ ուրեմն գիտութիւնս :

Ա՛հ , շատ անգամ միատեղ կը պատմէինք այն քաղցր ծերոյն վրայօք : Օր մը , կղզւոյն բլրին գագաթ՝ միասին գացինք տեսնել 70 տարեկան ալեւորը . որ քաջուած աշխարհէն՝ մենիկ կը կենայ հոն , պզտիկ ու սիրուն խրճիթի մը մէջ : Ուսեալ և խիստ լուսաւորեալ մարդ մը , շատ ճամբորդութիւններ ըրած , երբեմն նաւապետ , վաճառական , քանի մը լեզուներու հմուտ : Առողջ մարդ մը որ կ'աշխատի պարտիզին հետ միշտ , և բանջարեղէնէ , պտուղէ զատ , ունի գեղեցիկ ծաղիկներ , սրունք կը խնամէ մի միայն ինքը : Երբ ներս մտանք ,

իւր երկու զաւակները նոր մեկնած էին, որ ամիսը մէկ—երկու անգամ զինքը տեսնել կուգան կ'ըսէր : Բարձրահասակ վսեմ ճակատ մը, ջղոտ դէմք մը թխագոյն, քուրձէ սեւ զգեստ մը հագած, որ մինչեւ ոտքերը կը գոցէին : Պատիկ գրատուն մը, որ այլ և այլ լեզուներէ բաղկացեալ ամեն տեսակ գրքեր կը պարունակէր : Անգարդ էր խուցը, այլ իւր պարզութեան մէջ, չեմ գիտեր ինչ անսակ սիրունութիւն մ'ունէր : Չէինք յագենար ուր որ գարձնէինք ակնարկնիս : Մարմարա իւր ամբողջութեամբը . հեռուէն երեւցած երկիրներ, որոցմէ ոմանք կարծես ամպերով ծածկուած են, կարծես ալ անկից վերջը, անկից անդին չի կայ, և երկինք՝ հոն երկրիս հետ կը միանայ : Ար մտածէի թէ արդեօք ի՛նչ են հոս լուսնոյ գիշերներ, և կամ ձմրան ասեան, երբ ձեան թանձր պատտառ մը կը ծածկէ ամեն ինչ . չորս կողմ սպիտակ, մի միայն կապոյտ ու տոգոյն կ'երեւնայ ծովը . և դարձեալ անոր մէջ ճերմակ կոյտեր, որ կղզեակներ են . . . Ար նայիմ կարծես և այս ժամուս, հո՛ն, այն պատուհանէն, ուր նստած եմ և կը դիտեմ բնութեան հիանալի տեսարանները իւր ամեն մէկ դիրքին մէջ :

Անդադար կը խօսէր ծերը, և անկուշտ մտիկ ընէինք, և ինքը կ'զգար թէ իւր խօսակցութիւնը ինչ տեսակ ազդեցութիւն կ'ընէ վրանիս, և թէ չէինք ուղեւար պատասխան մը տալով՝ իւր խօսքին թելը գուցէ կտրել : Ար խօսէր ամեն բանի վրայ, և շատ անգամ իւրովի կ'ըսէի թէ « արդեօք կ'երագեմ . . . » վասն զի մի և նոյն ծերունին, մի և նոյն դիրքը, մի և նոյն խօսքերը՝ որ կ'ելլեն շրթերէն՝ արդէն քանի քանի ունգամ ստեղծանէ երեւակայութիւնս :

Ո՛վ վսեմ ծերունիդ . ի՛նչ բաներ խօսեցաւ . ճշմարիտ փիլիսոփայ . ըսի որ ի՛նչ կ'ընես գիշերները, մանաւանդ լուսնոյ գիշերներ — որ հեռուէն, նրբաթել ամպերու մէջէ, քառորդ լուսինը կ'երեւար . որուն եղջիւրի ձեւ ունենալուն՝ այնպէս կը կոչեն — կ'զգայի որ չէր ուղեւար զմեզ աւելի յուղել, և կ'ըսէր թէ « արդէն գիշերները »— Գ ժամէ աւելի չեմ կրնար քնանալ . կը կարդամ, այլ ժամէ մը վերջը պէտք է որ թողում . վասն զի ի՛նչ . . . » կ'ըսէր : Ար գրե՛ս հարցուցի . կը խնդար :

Խօսեցաւ իւր ճամբորդութիւններուն վրայ, սոսկալի անցքերու, պատահարներու, իւր մանկութեան վրայ : Անգամ մը « եթէ հիւանդանաս հոս, ի՛նչ կ'ընես բոլորովին առանձնելի, առանց բժշկի . առանց մարդու մը » ըսինք . — « բա՛հ, ըսաւ, և հառաչանքէ մը վերջ, կրկնեց . հարուստ էի . ըրի ամեն ինչ, ինչ որ կրնայ ընել մարդ մը . ամեն հաճոյք, ամեն զուարճութիւն վայելցի . ասոնց հետ միասին, ունեցայ ամեն ցաւ, ամեն վիշտ : Աին մ'ունէի, սիրելի ամուսին մը, հիւանդ էր . եօ՛թը, եօթը բժիշկներ կը հսկէին իւր վրայ գիշեր և ցերեկ . . . ի՛նչ կրցան ընել . . . բա՛հ . ի՛նչ օրուտ կ'ընէ վաւակներս, երբ հնչէ անաւոր ժամն այն, և բոլոր աշխարհ ճգնի ազատել զայն : Մեռանի՛լ հոս, այս լեռան գլուխ, առանց և ոչ մէկ մարդու փշել հոգին, ի՛նչ տարբերութիւն կայ, քաղաքներու մէջ, կակուղ անկողիններու մէջ մեռնելէ : Ամեն բանի ճաշակն առի, և այն՝ պէտք է . հիմայ 70ը կ'անցնիմ, օրուան մը պէս 70 հատ 365 օրեր անցան . ի՛նչ հասկցայ — ոչ ի՛նչ : Այլ այս կեանքը սիրելի, յոյժ սիրելի է ինձ, որ հեռի աշխարհային ամեն տեսակ ազմուկներէ, հոգերէ՝ կ'անցընեմ իմ վերջին օրերս . այլ, իբրեւ

յիմար, ճգնաւոր անուեով չէ որ կը տեսնէք մի
 և նոյն կղզւոյս մէջ, ճիւղաղի ձեւերով, առանց
 զգացման, իւր նմանէն, մարդոցմէ իսկ կը խորշին :
 Դուք մատաղ էք դեռ . այո՛, կըսեմ ձեզի . չէ թէ
 միայն տարիքով, այլ աշխարհի ծովուն ամեն մէկ
 կոհակներէ զեզերեալ մարդու մը սլս, կ'ըսեմ
 ձեզի . ըրէք, ինչ որ բարի և ինչ որ կրնաք ընել .
 առաքինութիւն : Ահա խիղճս արդար, և որ կը
 յանձնեմ՝ զայն ի ձեռն գերագոյն Արդարոյն, Մե-
 ռանի՛լ, և ինչ փոյթ է, թէ և ոչ մէկը կ'ընկերա-
 նայ դագաղիդ . ինչ օգուտ է եթէ բազմութեամբ
 կրօնաւորաց, մեծ հանդիսով թաղուիլ, փառաւոր
 շիրիմ՝ մ'ունենալ : Ո՛հ ո՛չ . թող մարդ մը միայն՝ եթէ
 կ'ուզենայ այն ալ, կարճ Հայր մեր մը մրմնջելով,
 դնէ զիս անծանօթ տեղ մը, փոսի մը մէջ . . . » :

Այո՛, վսեմ՝ ձերուներդ . բայց, դու չսպառ-
 ցա՛ր, չի վարմացա՛ր, երբ մեր այն հասակին մէջ,
 յափշտակուած այդ ցանկալի կեանքէն՝ աւելի աը-
 զայական խօսքէ՛ սրտէ կը բղխէր, երբ հարցինք
 քեզ « մնամք և մեք հոս . . . » և դու անոյճ ծի-
 ծաղով մը խրատեցիր զմեզ « աշխարհ ձեզի հա-
 մար է . դուք մատաղ էք . . . » ըսիր . և կը յիշե՞ս .
 զիտե՞ս այժմ, թէ այն երկու տղայոց մին, որ սիրով
 դորովանօք ու յարգանօք՝ թէպէտ դու թոյլ չէիր
 տար՝ այլ բռնութեամբ ձեռքդ համբուրեցին՝ ա-
 նոնցմէ, աւելի նորատին, այժմ կը ննջէ . . . :

Քու փիլիսոփայ ճակատովդ, թէպէտ լաւ գիտ-
 ցած թէ ոչինչ է աշխարհ, այլ 70 տարիներ փրն-
 տաճ ու չի կարեցած գտած գաղտնիքը՝ նա վաղ
 իսկ ճանչցաւ . . . աւելի՛ մեծ ուրեմն այն պատա-
 նի փիլիսոփայն՝ որ կը մենակէ այժմ՝ լուսթեան և
 առանձնութեան աշխարհին մէջ :

Թէպէտ յոյս չունէր ալ սպրեւու . ա՛հ, որ-
 չա՛ի անոյճ ես ուրեմն ո՛վ դառն կեանք : Ալօթեց
 առ Աստուած, աղօթեց . . . աղօթեց, այլ վերատին
 գիտցաւ թէ չողորմիր նա, դարձեալ ցնորած՝ յոյ-
 սը մարդկանց վրայ դարձուց և դարման կը փրն-
 տաէր :

Տխուր նստած էինք սենեակը՝ յանկարծ « հայր »
 կոչեց, և արցունքով աչքերը դէպ անոր դարձու-
 ցած՝ « ա՛հ կոչեցի, որ գուցէ ճար մ'ընես ինձ հայր
 իմ . . . » կ'ըսէր :

Յետին օրերուն, յետին ժամերն էին և բնաւ չի
 կորոյս իւր մտաց կարողութիւնը . անգամ մը դար-
 ձեալ սենեակը կը մտնէի, երբ դրսէն իւր հառաջա-
 ձայնը լսեցի, որ « վա՛խ Պետրոս, բան մը քեզի օ-
 գուտ չ'ունի ալ ուրեմն . . . ալ յոյս չունիս ու-
 րեմն . . . վա՛խ Պետրոս . . . » կը պօռար . և այն
 գթասիրտ հոգին, երբ տեսաւ զիս, որ փղձկած
 կուրծքով, չի հեծելու համար՝ կը հեւամ « դո՛ւրս
 դո՛ւրս ել սենեկէն, թող առանձին զիս . . . »
 ըսաւ : Մեղքցաւ զիս, որ քովը չըլլամ, և չի տես-
 նեմ իւր վիճակը . օրհասական ժամերուն մէջ իսկ
 կը գթար նա :

Հինգշաբթի երեկոյ, 22 Սեպտեմբեր, յետին
 ժամերուն յետին օրը, թալկացեալ լեզուաւ կը մըր-
 մնջէ, « թոչունը, կ'ըսէ, վաղն առտու . . . » հա-
 դար հարցում, ստիպում, ալ կը լսէ, ալ չի խօսիր .
 և նման թոչնոյ մը, որ ծառի մը տերեւներուն տակ
 ծածկուած կը գեղգեղէ թէպէտ, այլ երբ ուրիշ ձայն
 մը, շնկոց մը լսէ, ալ կը խօսի՞ . . . և այո՛, այո՛,
 միւս առտու, թոչնոց զարթուցման հետ և ինքը
 կենաց քունէն արթնցաւ . . . : Երկար ատեն վազե-
 լէ ու հալածուելէ վերջ՝ հոգնած ու քնհատ, ա-

գատ ու խալսած, ալ անոյժ անձի մը պէս՝ որ կը գնէ գլուխը գետին, և նուազ առ նուազ կը գոցուին աչերը՝ նոյնպէս կեանքէ հալածուելով, մահուան գրկին մէջ ապաւինեալ՝ քիչ քիչ արտեւանունքը սկսան գոցուիլ. և երբեմն ձայնող լեզուէն՝ անգօր շնչով, անձայն, աշխարհի վերջի ողջոյնին հետ՝ առաջին բարեւը տուաւ յաւիտենականութեան, և անխօս ու արհաւիրալի լուսթիւնը տիրեց անոր վրայ:

Ո՛վ լուսթիւն, չկայ ձայն մը, որ չի լռէ: Ամեն բանի թող կ'ուտաս, որ ձայնէ. բայց կուգայ վայրկեան մը, որ ամենէն ահեղ գանգիւնը՝ անշունչ կը մնայ: Չի կայ ձայն մը, ինչպէս չի կայ կեանք մը՝ որ չի մեռնի, չի կայ բնաւ ձայն մը, որ չի կորուսի բոլորովին:

Ո՛վ անհուն, անեզր յատակ. չի կայ զօրութիւն մը որ կարող ըլլայ գտնել այն մեծագոյն բարբառը՝ ակնթարթի միջոցի մէջ իսկ՝ երբ անգամ մը սուզի քու անդունդդ. . . անյայտ բնաւին:

Ո՛վ լուսթիւն. և ժամանակն համր ընկեր քո մտերիմ, և տարիներն ինչպէս և բոպէ մը՝ կը կըլանէ իսկոյն մարտելով զայն անյայտ:

Այլ, ո՛վ անդորր ու յուշարար լուսթիւն. դարձեալ դու ես, որ մինչեւ իսկ բազմաշունչ ազմուկի մէջ, մարդու շնչած օդին հետ, կը մտնես անոր կուրծքին մէջ, և կը խօսիս լռիկ. և դարձեալ քու լուսթիւնդ, որ բնաւ ձայն մը չի կրնար խանդարել:

Եւ ժամանակն, անմասն արագութեամբ սահող շտութեան մէջ, մերթ ներկայն բոլորովին մէկ կողմ նետած՝ անցեալը դէպ յառաջ կը քաշէ և անոր մտքին մէջ կը դնէ զայն՝ որպէս միշտ ներկայ. և

անլուսթեան մէջ թաղուած ձայներն եւս միշտ ներկայ. . . : Եւ սթափի. . . կը յիշէ, որ անցեալ էին արդէն այն ձայները և զանոնք յիշած միջոցը, որ ներկայ էր՝ և անիկայ անցեալ կը գտնէ. յառաջացած է ժամանակը. . . նուազման միջոցէն մինչեւ սթափում՝ որ ապագայ էր՝ և նա երկրորդ անցեալ՝ ներկայի վրայ բարդեալ կը գտնէ:

Ո՛վ լուսթիւն, միթէ կայ քեզնէ աւելի մեծ, թէ քաղցր, թէ սուսկալի, թէ ներդաշնակ, թէ ահեղ ձայն մը: Ա՛հ. լուս ձայն, որ մարդկային հոգւոյն հետ կը խօսիս: Չայն. առանց լուսթեան կարելի՞ էր ըլլալ քեզ: Ո՞րն է աւելի մեծ, աւելի բարձր քան զքեզ ո՞ր լուսթիւն, որ կը մնաս անշունչ պինդ երկաթի մը՝ ինչպէս նուրբ տերեւի մը մէջ. ամեն բանի շրթունք մը կու տաս որ կը պահէ ու կ'արտադրէ, և ի՛նչ հետքեր կը թողուս մարդկային ականջներու մէջ, որ անտեսանելի հեռաւորութեան մը մէջ մէկ նուազ հնչումը՝ կ'զգայ իսկոյն թէ որո՞ւ և ինչի՞ ձայն է:

Ա՛հ լուսթիւն. տիրած ես այժմ և իմ վրայ, որ նուազ ձայն մը կը լսեմ. մտերիմ, սիրելի ձայն մը. . . ուսկի՞ց կու գայ սա. քանի՞ անհուն հեռաւորութենէ և կամ որչա՞փ մերձաւորութենէ. . . : Խառնակ ձայն մը, որ կը խօսի, որ անունս կու տայ, և շուրջս կը նայիմ, այլ ոչ ոք կը գտնեմ: Քաղցր ու սիրելի է ինձ այս ձայնը. կը փնտռեմ շուարեալ. բարէ՛. քանի կ'որոնեմ՝ այնչափ հեռու կը գտնեմ. քանի հեռու՝ այնչափ մօտ: Կը լսեմ խօսքեր, որոնք անցեալ օրերու մէջ լսած եմ արդէն. կը ձանձնամ այս ձայնը, և ես ալ կը խօսիմ իրեն. այլ. . . կրնամ հաւատալ թէ չի լսեր նա զիս, ինչ որ ես կը լսեմ իրմէ: Կը խաբուիմ

թէ նա միշտ է քովս արդէն , այլ կ'զգամ թէ
 թռաւ նա . ալ չէ և է՝ ինչ որ էր . . . : Չեմ
 տեսներ զինքը . չկայ նա և ոչ ուրեք աշխարհի ,
 այլ , ահա՛ , ահա շուրջս . մի՞ է , թէ մի և նոյն
 թէպէտ , այլ մի և նոյն տիպարին տակ՝ փոխուած
 քանիներու : Ա՛հ . յար և նման պատկերներ կը
 տեսնեմ , և դարձեալ բազում . մանկութենէ մին-
 չեւ պատանի հասակին մէջ , ծննդէն մինչև մահ .
 հոս , միատեղ , բազմութեան մէջ , լեռներու վրայ ,
 առանձին , այլ և այլ դիրքերով . կը ննջէ , կը
 զարթնու . . . կը քնանայ . կը ծիծաղի . ժպտող
 արտօսրի կը փոխուի . կը մտածէ . . . կը կարդայ
 ուսանելու համար , այլ կը թողու . կ'աշխատի բա-
 նի մը հետ , և անոր տհաս պտուղը վար կ'իյնայ
 սառած մատներէն . . . կը քալէ . . . հոգնեցաւ .
 կը նստի . . . չի խօսիր . . . գլուխը գետին կը
 դնէ . . . կը քնանայ . . . հանդարտ է քունը . . . :
 Չունի դարկ մը , և չի շնչեր բնաւ . . . չի շարժիր .
 չի լսեր . չի խօսիր . չի տեսներ
 ամենը մէկ պատկեր մը եղաւ . մէկ հատ մը միայն
 կը տեսնեմ ալ , որ տխուր զիմօք արձանացեալ
 տարածուած է :

Ա՛հ . միայն ձայն մը կայ այնպիսի , աւելի համր ,
 աւելի լուռ , որ կը խօսի առանձին իւրաքանչիւր
 արարածի . և ի՞նչպէս հնարին է ստեղծել այն ձայ-
 նը , որ ըսինք մեռելոյն և զարթի՛ր » :

Ո՛վ քուն յաւիտենական , որ կը ննջէ մարդ
 յանկողին հոգէ յետ կրօնի օրօրցին մէջ որբելէ ,
 վասն զի աշխարհի չկան ալ իրեն համար ձայներն
 տաղաուկ , որ որորի չարթննալու համար . ալ ինքն
 իրեն է նա և աշխարհ կը թողու զայն միայնակ ,
 վասն զի իրեն համար սպառեցաւ կեանք — մօրն

կաթ ստեանցը մէջ . և ալ չի ճշէր նա . հանդարտ
 է , որ քիչ առաջ կուլար . կը դնէ դայն մահարան
 և զեփուռն ու փոթորիկ երգեն անոր :



Ո՛վ կրօն . ճշմարիտ յոյս . միակ ապաւէն տկար
 ու թափառող մարդկութեան , որ կը դեգերի երկ-
 րի վրայ , կը սուզի 'ի ցաւ 'ի վիշտ , և դու միակ մը-
 խիթար .

Ա՛հ , ո՛վ կրնայ ըսել թէ դու Աստուածային
 չես . ո՛վ կրնայ , անկից , գերադոյն էութենէ մը
 զատ , դնել մարդկային մտքին ու սրտին մէջ այդ
 վսեմ ու ամենարարձր յոյսը :

Դու որ 'ի ծննդենէ աշխարհի կաս . դու որ ծը-
 նող մանկին աչերն կը բանաս և մեռնող մարդուն
 վերստին դու կը գոցես . դո՛ւ , ո՛վ սուրբ հաւատ ,
 որ ներկայէն ապագան , միութենէ բաժանում ,
 մօտութենէ հեռաւորութիւն՝ կը միացնես . դու որ ,
 « ո՛վ , ի՞նչ , ինչո՞ւ » հարցմանց միակ դու կարող
 ես պատասխանել . որ , ամայութեան , ծննդէն 'ի
 վեր առանց մարդ էակի մը ընկերութեան , ոչ իսկ
 ազգաց լեզուներէն մէկը գիտցող մարդուն մէջն
 իսկ կը դնես յոյս մը՝ հանդերձելոյն վրայ :

Ո՛վ աներեւոյթ էակ , որ ծագաց 'ի ծագս կը
 կը պաշտեն զքեզ . կը հաւատան զքեզ , կրօնքը կը
 միացնէ իրենց հոգին քեղի հետ . և դարձեալ չի
 կայ կրօն մը՝ որ կարող ըլլայ թափանցել քու դօ-
 րութեանդ անքննին , և իւր ճամբով ուղեկիցնե-
 րուն՝ մինչև 'ի կատարած շաւղին , մինչև յօթեան
 հանգստեան դրած՝ ցուցանէ նորա ինչ որ այնու-
 հետէ պիտի տեսանէ :

Ո՛վ կրօն . կա՞յ մարդ մը , որ չի ծնրադբէ բնաւ

իւր կենաց մէջ, փաթթուած քառ սանդուխի առաջին ոտքերուն՝ ու չի բարձրացնէ իւր փառաբանութիւնը՝ մինչեւ վերին գահոյից պատուանդան ։

Աստուած բարի . ո՞վ կրնայ գգալով քու ճշմարտութիւնը՝ հաւատալ թէ չեն քեզ հաճելի և լսելի այն հոգիներու սուրբ ձայներ՝ որոնք աւելի ստորուէն կը բարձրանան՝ քան թէ Գողգոթայի գագաթէն, որ մտ է աւելի երկնից՝ քան ամենաբարձր լերինք որ կային և կան ։

Կենաց ճանապարհին բազմաճիւղ ուղիներ, ուր իրարմէ անտեսանելի զատուած, անթափանց պատերով, և ամեն ուղեւոր իւր ճամբան կարճ ու ու հարթ, դեղեցիկ ու անպահով ըլլալը կը կարծէ, և անվեհեր, ու միւսին խելքին ծաղրելով կը յառաջէ . . . Ա՛հ, երանի՛ այն ուղեւորին, ուսկից ալ որ հասնի դուռն յաւիտենականութեան, երանի՛ կ'ըսեմ անոր, որ իւր ճամբուն տօթին ու ցըրտին, արեւուն ու անձրեւին, ճակատն ՚ի քիրտ, անվեհեր ցատկէ երբեմն իւր առջեւ ելած փոսերուն վրայէ . անվեհեր, ու սրտին ճշմարիտ հաստատութենէն, առանց հողնելու, թէպէտ երբեմն և միշտ խոցուելով մշերէ, միշտ դիմացող և ոչ վահատեալ, յուսահատ հառաչէ . ա՛հ . երանի՛ այնպիսւոյն . սուրբ և պաշտելի է ինձ հոգիներու այն վսեմ գգացման ճշմարիտ հաւատ ։

Ա՛հ, չի՛ կայ աւելի վսեմ, աւելի վեհ գգացում մարդուս սրտին մէջ, մինչեւ իսկ սողորեւոյն, մինչեւ իսկ յուսահատեալին, երբ աւելի սոսկալի անգունդ մը կը ակննէ իւր առաջ, և կրօնի բազկացը փարած, կարծես ինքզինքը, անթել աղօթից շուանէ կախելով երկնից՝ ժրաջան ու աներկիւղ որ-

պէս հարթ մարդագետին կ'անցնի վրայէն անոր ։

Այլ սակայն, չի կայ մարդ մը ծնած առանց յուսոյ կանթեղ մ'ունենալու իւր սրտին մէջ, որ պէտք է վստի միշտ փարատելու խաւարն կենաց գիշերին . այլ այս յոյս—իւղը ընաւ չսպառի՞ . . . չը դիմէ՞ անյուսութեան . և դու ո՞վ գերագոյն էակ, որ միայն ասոր համար, որ դիտես թէ չկայ աշխարհէս առ քեզ դիմող բուռն ժողովրդին ճամբուն մէջ կատարեալ հանգիստ, կատարեալ երջանիկ անցք մը, ասոր համար դրիր քու մեծ, սուրբ ու վսեմ կրօնը, վրուցիր ու խորտակեցիր շատ մը նեղ ճամբաներու պատէ անջրպետներ, և այս ճամբէն, այս քրիստոնէական հաւատոյ ճամբէն ցոյց տուիր, որ դիմեն քեզ մարդիկ . այս ճամբուն մէջ, դու, որ ծարաւոյն աղբիւր մը կը ցուցնես, նօթիին մանանայ մը կ'իջեցնես, վշերու քով բալասան մը դրիր, վշտին քով երջանկութիւնը, անապատին մէջ ուվասիս մը, ովկիանու մէջ կղզի մը, վասն զի դիտես, որ մարդկային տկար ոյժը միշտ է վհատող ։ Եւ որ մարդ, թէ երկար թէ կարճ, վաղ կամ անագան երբ և հասնի իւր կայարանը, և այս գնացքին մէջ դրիր քեզի համար աղօթքէ վսեմ երգեր, խորհուրդներ, վսեմ անքննի՞ն խորհուրդներ, որ մարդ արբչու ու հիացած անյագ, կը գտնէ անոնց մէջ անարատ անբիծ սրբութիւն ։ Որ ուսուցիր անոր, թէ ոչ մի միայն գալու համար պէտք է դան մարդիկ քու յաւիտենական թեւերուդ տակ, այլ և բանի մը օգտելու, ճանչնալու համար կենաց ամեն դառնութիւնները, չափել, բաղձալ անոնց հակառակ՝ կատարեալ երջանկութիւն, որոց բունը, և շատ աւելին կը խոստանաս մարդուն՝ եթէ բարի և առաջինի անցնինք այս ճամբէն ։

Այլ, չէ՞ վերստին քու բարութիւնդ, Աստուած իմ, երբ տեսնես այնպիսի արարածներդ, որոնք՝ վիրաւոր և անկար են քայլելու, թող ըլլան դեռապիթիթ, և կամ գիտնալով թէ ի՛նչ աւելի մեծ պատրաստ են իրենց աղէտքներ ու տառապանք, ա՛հ, և միշտ հողուով մանուկ այն անմեղ արարածներդ վաղ իսկ կը կանչես առ քեզ :

Ո՛վ տաճար, որ միաբերան հողուոց աղօթքներ՝ ձուլելով ՚ի մի խորան հողուոց, որոց վրայ վառին անծախ սրտեր, և « Աստուած, Աստուած . . . » այս դերագոյն բառը ձայնեն միշտ . որ և դայ օր մը, վայրկեան մը, որ այդ խորանը, այդ հողին կը բարձրանայ, և ուրիշներ, որ անշունչ մարմնոյն բոլորած կ'աղաղակեն ակնապիշ յերկին . . . :

Ամեն աչ իւր կարողութեան համեմատ տեսնելով, կը դիտեն հողի մը ՚ի բարձունս . ամենքն ալ ահեղ ու անաչառ ատենի մը առաջ կը տեսնեն զայն . և վերջը, ոմանց երեւակայութիւնը կը գլուխէ զայն յաւիտենից փառաց մէջ, գոհ ու զուարթ, երջանիկ ու կատարեալ ծիծաղուն . ոմանցը, մըշտընջեաւոր տանջանաց սոսկալի գեհնն . . . և կան և հաղարաւոր գաղաբարներ, որ միշտ երկբայ, եթերին տակ կամ վրայ, կը պտըտցնեն զայն և չեն կրնար կայարանի մէջ գտնել :

Ո՛վ . տկար են մարդիկ յարածամ, և հետաքրքիր են նոցա ամեն մտածմունք . ինչո՞ւ, ինչո՞ւ համար կ'ըսեմ, դատել, փափաքիլ, տեսնելու հոն՝ ուր գնաց նա, և հոն՝ որ քիչ, շատ կարճ ժամանակէ պիտի լինի և նա . . . : Կարճ, շա՛տ անձուկ կը կոչեմ՝ մարդուս կեանքը, փասն զի աշխատող և աշխատութեան պտուղին բաղձացող մարմին մը կըրնայ գիտնալ թէ՛ որչափ շուտ կ'անցնին իւր տա-

րիներն և բուսններն, և որչափ աւելի անծոյլ ու միշտ խորհող միտք մը, միշտ զգայուն, ու երազող հոգի մը, որ ներկային վրայ դառնութեամբ՝ և աղաքային վրայ յուսով մը կը նայի . ու քանի մտեանայ այն ապառնին, աւելի սիրտ ՚ի թունդ կ'սպասէ, և մինչեւ իսկ—է՛ր կարելի ըլլար նմա— կը խնդրէ հեռացնել զայն :

Ի՛նչ մարդիկներ եկած են, և զգացած թէ, չէ՛ թէ հեռուն, չէ՛ թէ ուրիշի մը՝ այլ իրենց մէջ գտած են այնպիսի զօրութիւն մը, այնպիսի կարողութիւն մը, որ աշխարհի ամեն մէկ արարածին վրայ զարմանալով տեսնելէ աւելի, աւելի հիացած, աւելի զարմացած են ըլլել իրենց մէջի զօրութեան անքննին և գեր ՚ի վեր լինելուն : Ա՛հ մտածող հոգի մը, քանի քանի հնդ իւր կենաց մէջ, կ'զգայ թէ Աստուած մը կայ իւր մէջ, բարձրանայ, վսեմանայ, ինքզինքին վրայ ապշած անոյշ զմայլմամբ կը դիտէ իւր առաքինի և սուրբ զգացումները . այլ, միեւնոյն մարդն է դարձեալ, որ երբեմն իրեւ գազան վայրի, իրեւ չար, կուրանայ իւր էութիւնը, կզգայ թէ ոչինչ է ինք, ատելութեամբ կը հայի ամեն նուիրական բաներուն վրայ, աշխարհի վրայ, կը յուսահատի . . . այլ . այս իրարմէ անբաղդատելի զգացմանց միջոցին, խնդալով, արք համարչելով ի՛ տալէ այն զգացումներն, որ ունեցաւ երբեմն : Եթէ՛ այժմ վսեմութիւն կ'զգայ, հողուոյ ամեն վսեմութիւնը ըսել կ'ուզենամ, կ'ատէ այն ցած ու վատ կըքերը, որ երբեմն տիրած էին իւր վրայ . . . : Եւ այս է մարդ . և ասոր համար, մարդուս բաղձացած հանդերձելոյն երանութենէ՛ մէկ կատարեալ երջանկութիւն մը, արդէն իսկ շնորհած է Աստուած այս աշխարհի

մէջ . և այս է « ներողութիւն » : կը հանդատանայ խիղճը և կ'արդարանայ . ա՛հ , երբ այս խղճին անդորրութիւնը չ'ըլլար , վասն զի չ'կայ մարդ որ չի գործէ բան մը՝ որ չի գղջայ վերջը , և թէ՛ կ'ըսեմ , այն խիղճը չի կարենար հանդարտիլ՝ այն ատեն այս աշխարհս դժոխք էր :

Ո՛վ կրօն . այս վշտաց , այս փուշ ու տատասկ բուսնող աշխարհին մէջ՝ վերստին դրախտ մը չի նեցիր : Նախկին դրախտէն քստորեալ , և միշտ 'ի ցաւ 'ի վիշտ , նոյն երջանկութեան բաղձացող , և որ 'ի դու՛ր , արդ տխուր ու յուսահատ , և կտտրած սրտով հառաչանօք թափառէր , գթացիր զայն , և մարդկային հոգին քաջալերելով սիրտ տուիր անոր . և այս անպաճոյճ ու անապատ աշխարհը՝ եղեմական ըրիր պարտէզ : Մորվեցուցիր անոր չի յուսահատիլ , և իւր նախկին փառքերէն զրկեալ՝ և այժմ անզարդ երկիրը որ գտաւ ինքզինքն՝ տեսութենէ նուազեալ աչքերը , որ միշտ կը տեսներ սառ և ժայռ , կայծակ ու խաւար . ցոյց տուիր անոր զատել քարերն փափուկ հողէն՝ և անդ սերմանել . ցոյց տուիր իրեն տեսնել թէ ինչպէս կը հային սառեր արեւու ճառագայթներէն , և չի կարծել թէ նա՝ այրելու համար եղած է միայն . ծարաւի էիր , ցոյց տուաւ քեզ չ'երկնչիլ կայծակէն , այլ աղօթել ու փառք տալ արարչիդ , որ ահա ցնդին սեւաթուխ ամպեր և քաղցր ցօղէ անձրեւ . չ'երկնչիլ խաւարէն , վասն զի յետ գիշերոյ կուգայ լոյս մը փարատել զայն . չ'երկնչիլ և չի տխրիլ կըսեմ խաւարէն . երբ կը տեսնես կը գոցեն աչերն ուրիշներ յաւիտենապէս և կը դնեն զանոնք մութ հողուն մէջ . այլ գիտնալ ապահով յոյսով թէ անոր ալ ինչպէս ամեն գիշերի՝ առաւօտ մը կայ . . .

Ո՛վ կրօն . երանացո՛ւցիր դու , զանոնք , որ կ'արտասուեն . զանոնք որ կը պապակին . վասն զի յետ արտասուաց ծիծաղն է ժպիտ , յետ պապակման խմել ջուր՝ այն ատեն է որ չէ մարդ ծարաւի , յետ ննջման է զարթնում , յետ մահուան է կեանք :

Կէս գիշեր է . աշնան ախուր գիշեր է . լուսինը մութ ամպերէ պաշարուած՝ դողդոջուն և դեղնած՝ միայն քանի մը հեռաւոր աստղերու հետ՝ առանձնեկի , կարծես երկիւղէն կը սոսկայ . և թանձր ամպերը չեն թողուր , որ այն մէկ քանի աստղերը իւրեն՝ և կամ ինքն անոնց մօտենայ , որոնք իրենց աղօտ ճառագայթները կը սեւեռեն տխուր գերեզմաններու վրայ , որոց լոյսը կարծես թէ կը հեւայ , օրհասականին յետին շունչը փչող լանջին հեւալուն պէս , իմ բարախող սրտին նման . . .

Հովհար չոր տերեւներն ծառոց , շիրիմներու վրայ կը խփխփան . անոնց ձայնը աղօթքներ են մեռելոց համար :

Ահա կ'զգամ իմ գլխուս վրայ ալ լուսնոյն դալուկ ճառագայթներ . . . իմ ձակատս ալ գերեզմանատուն մ'է՛ ուր կը հանգչին տխուր յիշատակք մեռելոց . . . անոնց սեւ նոճիներն՝ գլխուս վրայ ցցուած մազերն են . անոնց սոխակներու հեծիւնք՝ մերթ ընդ մերթ թրթռացող շրթանցս հառաչներ :

Պետի մեռնիմ ես ալ օր մը , այս աչերս ալ չի պիտի տեսնեն ոչ երկինքը՝ ուր այն անսահմանութեան մէջ հոգիս կը հոլաթեւէ . ոչ այն լուսինը՝ ուր շատ գիշերներ գինքն կը դիտեմ և անոր հետ կը խառնեմ իմ արցունքս ալ , այն՝ որ համայն աշխարհի թշուառութեան վրայ կուլայ , բայց այնչափ

չէ թշուառ . վասն զի տաս երկու ժամերով երկայն քուս մը կ'անցնէ : Այս աչերս ալ չի պիտի տեսնեն արեւը՝ որուն հորիզոնէն ելելէջը առաւօտաներն ու երեկոյները ապուշ աչօք կը դիտեմ . որ բռնկած եւ բակներուս մէջ՝ ցերեկները աւելի ես սաստկացնէ հոսքը իրեն կիպիչ շառաւիղներով : Զի պիտի ընկողմանեալ նստիմ՝ ալ ուստարիտ ծառերու հովանեաց սակ . չի պիտի տեսնեմ ալ այս հեռուէն երեւցած նեղուցը՝ որուն մէջ լուսնոյն նիհար ճառագայթներն կոտորտուելով թափթփած են . չի պիտի տեսնեմ ալ ծովերու՝ ոչ լեռներու պէս բարձրացած եւ ոչ հանդարտ կոհակները . երբեմն ահաւոր երբեմն մեղմածուփ ձայնը , որ մերթ ափանց մօտ գտնուելով՝ միրկէ կամ հանդարտ ու անոյշ հովէ մը մղուած՝ կուգան միշտ ինքզինքնին քարերու զարնուելով : Զի պիտի լսեմ ոչ առաւօտեանն և ոչ երեկոյեան թռչուններու դայլայլիկը , ոչ ցերեկուան խուժողութիւն աղմուկը , ոչ երեկոյեան միւլէզգիներն ձայնը . . . և ոչ գեշերային մթութեան ու խաղաղութեան մէջ , անդորր ու յուզեալ սրտիս՝ աներեւոյթ ձայնի մը՝ ահարկու բարբառիլը :

Պիտի մեռնիմ ես . և պիտի մեռնին ինձ հետ իմ տխուր ու սիրելի յիշատակներս ալ . ա՛հ , այս անխօս թղթիս վրայ կը կանգնեմ ձեզի մահարձան ո՞վ յիշատակը դառն և սուրբ , որ դողդոջուն գրչիս ծայրն անօր՝ սահելով կանցնի և հետք մը կը ձգէ իրեն ետեւէն :

Ինչ է մահը . ըսէք ինձի ոգիք մեռելոց . դուք որ յիշողութեանս մէջ անմեռ՝ գնացիք սահեցաք , ոչնչութիւնն է . . . Մարդ՝ յորում ճակատն յերկին , աչերն յերկին , անկից ընդունի լոյս , անկից խորհուրդ , հոն կ'ուզենայ մտօք սլանալ , հոն աչօք

վերանալ , այն ատեն միտքը հոն՝ երբ հանդէպե՛ գլուխը , այն ատեն պիտի տեսնէ հոն՝ երբ գացէ աչերը :

Ո՞վ մարդիկ . դուք որ, առիճներուն իսկ սանձեր կը դնէք , լեռան խոռոչներու մէջ վաղ եր ձագերն կը յափշտակէք . դուք որ ինքզինքնիդ աշխարհի տէր և թագաւոր կ'անուանէք , շատ ունայն , շատ ոչինչ էք : Այն կենդանիները՝ որ մը պիտի անցնին ձեր գերեզմանին վրայէ և ոտքերնին գետին տրոփեն :

Դուք որ օդուն մէջէ թռչունները կորաք , ծովերու մէջէ ձկերը կը քաշէք , է՛հ , դուք չի պիտի կրնաք թռչալի այն թռչնեկին պէս երկնից անդունդները . չի պիտի կրնաք խուզարկել այն ձկին պէս ծովերու յատակներն , ա՛հ . տեղի՛ տուք խորհուրդք անարժանք , լռեցէք ո՞վ ձայնք աղմկալից , ցըրուեցէք խաբեբայ անուրջք և ցնորք . տեղի տուք ձայնք պատերազմաց և շաշիւն զինուց . գոցեցէք արիւնավի մատեանները . մարտից փողերու գոչիւնը չէ , որ կը բորբոքէ սիրտս :

Անթիւ մարդկանց յիշատակներն , իրենց ամիւնին վրայ մնայուն քար մ'ալ շունեցան . փրուեցան աւրուեցան այն իրենց դամբաններու գրերն ալ . իրենց սերունդը , առանց իսկ յիշելու թէ իւր նմանը ոտքին տակն է՝ կ'անցնին վրայէն : Ամեն նշանաւոր անցքերն աշխարհի՛ երկու երես անշունչ թղթերու մէջ կ'ամփոփուին . ամեն բան պատմութիւն մը կը դառնայ . սակաւ պատահարք , գործք և անուանք մարդկանց՝ երբեմն ողբերգութիւն մը կարող են ըլլալ , թատրոնի վազանց արարուածոց տակ : Թող ըլլայ ճշմարիտ այն անցքը , քերթօղին՝ նոյն թատրերգութեան հեղինակին գրիչն կը գո-

վեն . բեմերու վրայէ ինքն և դերասանք ծափահա-
րութիւն մը կ'ընդունին , եթէ տկար՝ այն ալ չկայ .
« այս անհամ է . . » ներկայացմանէ մը վերջը՝
լմնացաւ . եթէ տպաւորութիւն մը կ'ընէր հանդի-
սականաց՝ մոռցուեցաւ :

Մեծ մարդիկ ունեցաւ աշխարհ . իսկ , ո՛հ ,
քանի հատներ կրնամ գտնել , մարդիկ այնպէս՝
որ ամբողջ բնութիւնը իրենց մէջ զգացին . տիե-
զեբքիս անհունութիւնը՝ իրենց հոգւոյն անհունու-
թեան հաւասարեցաւ : Այո՛ . այնպիսի մարդիկ ,
որ աշխարհս իրենց՝ քան թէ իրենք աշխարհի մէջ
ծնան : Եւ մեռան վշտահար . մեռան յուսակտուր
ու հառաչանօք . մեռան միշտ արտասուելով : Ո՛վ
աշխարհ . գտնել զքեզ այնպէս , որպէս գերադոյն
ձեռք մը կ'ստեղծէ այժմ՝ հոգւոյս մէջ բա՛հ ,
երազնե՛ր են ասոնք , երազնե՛ր , երբ հառաչանաց
ու արտասուաց քունով՝ վայրկեան մը կը նիրհեն
իմ վշտերս՝ յուսահատ մութ գիշերներու մէջ խօ-
լական անընկերով :

Ահեղ մենչեն պաղ հողմունք , և ցրտութենէ
ջերմանալու համար կը տաքցնեն ինքզինքնին իրա-
րու ետեւէ վազելով կը հրեն գիրար , կը խաղան ,
կը սուրան խառնաչիօթ կը դառնան՝ և ծառերու
քսուելով կը շիւռին . . . :

Կաղաղակեն , կը պօռան և կը հանեն մեծ աղմուկ .
մերթ ընդ մերթ զայրազին ու բարկութեան ձայներ
և կարծես՝ երբեմն խնդալու քահքահներ . . . :

Ահա՛ կայծակունք որ շանթեն և որտամունք որ
գոռան , բա՛հ . սոցա այս խառնակ իրարանցումը
ոչ ուրիշ բանի՛ ոչ մի միայն երկնից այն քանի մը
աղօստւոյս կանթեղներուն համար էր , որ շնչեցին

փչեցին , մարեցին , և թաւալեցին . . . և անձրե-
ւէ . . . հորդահոսան կը թափթփին կայլակներ և
միաբերան կը ձայնեն . ահեղ աղմուկ մը կը տիրէ չորս
դին . կը դիտեմ զաշխարհ , կը դիտեմ երկինք սեւա
մառախուղով մը պատած . կը խորհի՛մ , և իմ սըր-
տակտուր յիշատակներս դողդալով կ'ուզենամ
ծածկել խորհրդոցս մէջ :

Ա՛հ , և չ'են ուրիշ բանի համար հողմունք , այլ
մտաց նաւին համար , ուր խորհրդոցս առաքաստ-
ները ուռեցուցած՝ կը հրե՛ն . . . այլ բա՛բէ . այս
անեղր ովկիանին , և աստ իսկ , ջրին մէջ ծակտիկ-
ներ բանալով՝ անդորր որ էին կոհակունք՝ ահա
կատաղի ալիքներ կը դառնան սեպածե . . . :

Եզե՛րք մը . . . օգնութիւն ինձ . . . :

Եւ վաստակեալ ու չուարած նաւաստիին , մէ-
ջը ջուր առած նաւը չ'ընկղմելու համար՝ վերստին
դէպ 'ի ծով թափելուն պէս՝ կը փութամ պարպել
վերստին գաղափարներս առ ովկէան , թէպէտ վա-
րանեցայ նախ , յիմարաբար մտածելով և կամ
սոսկմանէս ինքզինքս կորսնցուցած , թէ աղէ՞կ չէ՛
որ այս ջրէն եթէ քիչ մը նաւուն մէջ մտնէ՛ ուլ-
կէանին ջուրը կը քիչնայ : Բայց , ահա կը զարնուի
և կը խրի նա սեւ ժայռի մը՝ որուն անպարփակ ծայ-
րը գրկած թեւերուս մէջ՝ կը սարսուի . . . :

« Ի՞նչ է մահը . սմեն բան թողուլ , երթալ . .
« և արդէն չէ՞ մեռած այն մարդը միայնութեան
« մէջ , առանձին իւր խորհուրդներով . չէ՞ մեռած
« այն մարդը՝ խորունկ քնոյ մէջ անզգայ :

« Ի՞նչ է կեանքը . — ինչ որ է մահը : Ի՞նչ է
« մահը — ինչ որ է կեանքը :

« Կեանքը մահուան՝ և մահը կենաց ստաճնորդ
« է : Որ սկիզբ՝ և վերջ ունի . մահուան սկիզբը՝ կե-

« նայ վերջն է . և միթէ կեանքը սկիզբ մը չ'ունի' . . .
 « կար սակայն՝ ինչ որ եղաւ : Ո՛վ անքնների գաղտ-
 « նիք . ո՛վ անհուն յատակ . որ կը սարսափեցնես
 « զիս : Ա՛հ , այս ժայռին ծայրէն սոսկալով կը դի-
 « տեմ և քանի մութ է թէպէտ , աւելի կը գոցեմ
 « աչերս , անցելոյն լուսոյ նուազ ճառագայթ մը
 « կ'երեւակայեմ բերուս մէջ . . . : կատաղի ա-
 « լիքներ՝ գլխուս վրայ մուշկելով կը թափին . և ոչ
 « իսկ հառաչանք մը կարող էմ արձակել . ջրէ լեռ-
 « ներ կը թաւալին առջեւս . անոնց ոտքին տակէ
 « անդունդը տեսնել կը յուսամ , այլ իսկոյն ու-
 « թիչ աւելի ահագին , իրարու վրայ ելած հեղուկ
 « լեռներ՝ անոնց տեղ կանցնին , որպէս զի կարող
 « չըլլամ տեսնել յատակն . . . սառեցան ձեռքե-
 « րլս . . . հոգնեցան թեւերս . . . թուլցան մատ-
 « ներս . . . ալ սպառեցաւ ոյժս . . . և . . . » :

Մ'հ կը բանամ աչերս . և կը գտնեմ ինքզինքս
 մտածութեանց ցամաքն անապատ . կը գտնեմ ինք-
 զինքս փոռած խօսք — եղբրաց բառէ աւագ-
 ներու վրայ . . . :

կը գտնեմ ինքզինքս գէպ 'ի ետեւ ծուած ա-
 թոռիս վրայ՝ գլուխս ձախիս յենած :

Վերստին կը գտնեմ աչքիս առջեւ պատկեր
 « մահուան « կը տեսնեմ ընդարձակ աշխարհ մը ,
 « աշխարհ մը ամեն արարածներով լեցուն . և հե-
 « տաքբեր ու զուարճութեամբ մը կը տեսնեմ այն
 « զօրութիւնը , որ արագ կը գործէ կեանք , կը
 « գործէ մահ : Չօրութիւն մը , որ չի կայ բոպէ մը ,
 « ակնթարթ մը՝ որ չ'ընէ՝ ծնիլ ու մեռնիլ միշտ ա-
 « մեն բանի . և անբացատրելի զգացմամբ կը հա-
 « մակիմ . անբացատրելի հանոյք մը , անբացատ-
 « րելի գոհութիւն մը , անբացատրելի սրբութիւն

« մը կ'զգամ : Չօրութիւն մը , որ ամեն ինչ ունի
 « հաւասար . մահ ու կեանք կչոյ մը երկու նժար-
 « ներու մէջ , աշխարհ մը՝ ուր կը համոզուիմ բը-
 « նախն թէ չիք ինչ բարի և չար . ամենայն ինչ
 « այն զօրութեամբ կը շարժի , կը գործէ . և որ ա-
 « մեն բանի մէջ նոյն զօրութիւնը ամենահաւասար
 « է , կրնայ ըլլալ երկու հակառակ արդիւնք : կը
 « տեսնեմ այն , որ չար , ամենաչար կը կարծեմ ,
 « այլ մի և նոյն վայրկենին , անդին , որ բարի , ա-
 « մենաբարի էր՝ ահա այս չարը բարի , և նա չար
 « կ'ըլլայ . և ասոր չարութիւնը ու անոր բարու-
 « թիւնը պէտք է , որ կը տեսնեմ թէ ինչեր կ'ըլ-
 « լան , ինչեր կը ձուլին վերջը . . . և ապա՛ծ ,
 « կզգամ այս զօրութիւնը . այս աներեւոյթ զօրու-
 « թիւնը՝ որ փռչի մը՝ ինչպէս աշխարհի մը միան-
 « գամայն գործել կուտայ . . . : կը տեսնեմ բիւ-
 « բառոր արարածներ , որոնք առանց գիտնալու ,
 « զատ զատ , և ամենքն ալ իրարու համար կը դոր-
 « ծեն . . . : կը ահա գիշերն կը տիրէ . ամեն ինչ
 « մթութեան մէջ կը ծածկուի . ահա այս է այն ա-
 « մենամեծ գաղտնիքը , բուն իսկ զօրութեան կաթ-
 « սան՝ որ ինքնիրեն կեռայ և իւր շոգին կը սրփ-
 « ուի յընդանուրս : Այս որ մթութեան մէջ կը
 « գործէ , չ'կայ աչք մը որ կարող ըլլայ տեսնել
 « զայն . գիշերային խաղաղութեան մէջ կը գործէ
 « նա , վասն զի ամեն , և ամենէ մեծ գործերն ,
 « որ կ'ընէ բնութիւն ցերեկ ատեն ահագին աղմը-
 « կով և բոցածածանչ արեւու լուսաւորութեամբ՝
 « շատ աւելի մեծ անդորրութեան ու մթութեան
 « մէջ անդգայապէս . և օրուան ամեն մէկ պատա-
 « հարքն ու գործերը՝ գիշերունէ կը տնօրինէ :

« կը նիրհէ կոկոն ծաղկին՝ և տաւօտուն կը
 « քակէ իւր խանձարուր թերթերն՝ որուն մէջ է ա-

և նոյ ըստուումն ծնելով՝ կը զարթնու և զեփիւռք
 և անոր թեւը մտած կը պտտցունէ զայն : Պզտիկ
 և հունտ մը, աննշան կերպով հողուն մէջ պահուած
 և կզգենու տերեւ . կունենայ փող մը, և այգուն
 և թող ըլլայ մեծ քարեր իւր վերայ՝ կը գտնէ վեր-
 ք ջապէս նեղ միջոց մը՝ և այն քարէն աւելի եւս
 և գուցէ կսկսի բարձրանալ . և կամ յենլով անոր՝
 և կարծես աթոռի մը վրայ կը բազմի, կը փռուի .
 և երբեմն, վերստին իւր ծայրով հողուն տակ մը-
 ք տած՝ արմատ կը ձգէ դարձեալ և ուրիշ տեղէ
 և մը կրկին դուրս ելլելով՝ յառաջ կերթայ ու կը
 և տարածուի : Մերկացեալ ծառը կը նիրհէ . արշա-
 լուսոյն կը բողբոջէ ճիւղեր, կը փթթին խարշափ-
 ք ներ . կ'ունենայ ծաղիկ մը, երբեմն միմիայն չորս
 և հինգ բարակ ու նիհար անգոյն թերթերով, և
 և ասոնք ալ կը թափթփին, միշտ կը նիրհէ նա .
 և պզտիկ կոճակ մ'ունի առաւօտուն . միւս օր կը
 և մեծնայ, և ծառը իւր տերեւներուն մէջ կը պահ-
 ք պանէ զայն, որ առաջուց պատրաստեց այրող
 և ճառագայթներու համար . դեռ կանաչ, տհաս է :
 և Մհա և այս առտու կը տեսնեմ . գեղեցիկ գոյն
 և մ'ունի և հասունցած . կենսատու ջուր մը կը հոսի
 և մէջէն, որ մարդս, դիտող մարդը, արբիւ ու
 և հիացած, միթէ կրնայ այս ամենը դիտելէ վերջ
 և որչափ ալ ծարաւ, որչափ ալ ուտելու փափաք
 և մ'ունենայ, և յանկարծ տանի զայն իւր շրթանց
 և աղօրինեքու տակ, փչրէ, խածնէ ու կուլ տայ,
 և առանց թիւր անգամ համբուրելու, սքանչանա-
 ք լու և առանց բառի, խօսելու ինքզինքին ու բը-
 ք նութեան հետ . . . :

« Մեռաւ մարդ . հողն՝ ՚ի հող : Մարդկային
 և մարմնոյ աչեքն՝ որ մի միայն մարմին կը սիրէ՝ տա-
 ք կայն ամենէ սիրելիներն իսկ թողին զայն :

և Գայ աչուն և դարձնէ անապատ զարդարուն
 և ամենայն բոյսերով պարտէզն հողագործին . երկ-
 ք նից իջող կիզիչ ճառագայթներն՝ խամրեցին, տա-
 ք բափ հեղեղին՝ մաշեցուց ու հալեց : Սակայն վե-
 ք բըստին պիտի ծիլ ու բուսնի, իսկ այն հունտի մէջն
 և շէ զօրութիւնը՝ որ բուսնի, այլ այն մի և նոյն
 և երկնից իջող տաքութեան շառաւիղներուն, մի և
 և նոյն երկնից թափուող անձրեւի մէջն է զօրութիւ-
 ք նըն այն՝ որ կ'ընէ վերստին ծնիլ նմա :

և Տուաւ մարմին մարդոյն ՚ի հող, գնաց վերա-
 ք ցաւ և շունչն յերկինս, անդ է եւս զօրութիւն
 և հողոյ նորա՝ ուսկից իջաւ երբեմն յերկիր . անդ
 և յաւէտ կացցէ նա . անդ գարուն մշտնջենաւոր,
 և պարտէզ մշտադալար . անդ խոստացեալն դրախտ,
 և անդ որ խնդրէր աշխարհի, յուսար ու բաղձար .
 և ուր չլք ինչ բնաւ արարած մարդէն զատ, որ ու-
 ք նենայ այս տէնչ ու իղձ :

« Ա՛նդ » :

Ահա ասիկ կենաց մութ վարագոյրն, որ կ'զգամ .
 վարագոյր զգօղեալ, որ պիտի պարդի առ հասարակ
 ամեն մարդուն երբ իբրեւ պատանդ, թողու մար-
 ք մինն անդ ՚ի դուռն և մտանէ անդարձ . . .

կ'աներեւութանայ աւասիկ այս պատկերը, և
 բնա՛ւ ոչ իւր էութեան զօրութիւնը, որ կ'զգամ
 յաշխարհի :

Կը դադարի անձրեւն : Մի միայն տանիքներու
 վրայէ քարերու վրայ կաթկթող մէկ քանի կաթիւ-
 ներուն հանած ձայնը կը լսեմ :

Լսեցի և իմ յետին արտասուացս շիթերուն

ձայն՝ որ կէս ժամէ աւելի, չէ թէ միայն յիշելով, այլ մտածելով կուլամ՝ երբ զլորեցան այս թղթիս վերայ :

Անձրեւեց երկին և ծծեց զայն երկիր, իսկ դսողոռուն կը տատանին սա երկու կաթիլներն :

Յառաջացած է գիշեր. խաղաղ է սմեն բան. յուզեալ է հոգիս ու կ'այրի ճակատս :

Գրեցի շատ մը խօսքեր, կը յիշեմ. ալ հանգիստ է սիրտս միթէ այս անդորր ժամերուս պէս՝ փոխանակ առաջուան խառնակ յուզման :

Մի'րտս. Ովկեան սիրտս. . . մրրկեց հողմ. ալիք զալիս կոծեցին սակաւ ինչ աւելի թրջեցին զափունս՝ արդէն և միշտ թաց : Եւ անդէն կոհակս 'ի կոհակս յենած, կը մնան ակնապիշ յերկին, թէ, ո՞ գիտէ, և որչափ տակաւին պիտի անձրեւեն ամպեր :

Ողջոյն. ողջոյն գիշերիդ խաւարչուտ. ողջոյն քեզ, հուսկ ողջոյն ո՞վ Պետրէ, եղբայր սիրելի, որ կը նիրհես այժմ հողուն տակ. կը ձօնեմ քեզ այս երկտողս, կը թողում այդ հողին վրայ. խնդրելով, կը յուսամ թէ որչափ են անգօր, որչափ են անկար՝ այլ չեն քեզ մերժելի. վասն զի գիտե՞ս թէ այս վայրկենիս ինչպիսի մարած ձայնով մը կը մաղթեմ քեզ « Գեշե՛ն՝ 'ի տոյ Բաւ՛ն . . . »

№. U.

№ 686



to Wn

G864